ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Արմեն Արարատի Միրզոյանի «Քաղաքական կայունության գործոնների համեմատական վերլուծությունը Հայաստանի Հանրապետության և Իսրայել պետության քաղաքական համակարգերի փոխակերպումներում» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Հրապարակային պաշտպանությանը ներկայացված «**Քաղաքական կայունության գործոնների համեմատական վերլուծությունը Հայաստանի Հանրապետության և Իսրայել պետության քաղաքական համակարգերի փոխակերպումներում**» թեմայով ատենախոսությունն արդիական գիտահետազոտական աշխատանք է, որի կարևորությունը անհերքելի է և հիմնավորված:

Ատենախոսությունը նվիրված է տեսական և կիրառական առումներով արժեքավոր խնդրին՝ քաղաքական կայունության համապարփակ ուսումնասիրությունը, ինչպես նաև վերջինիս՝ պետությունների զարգացման, անվտանգության և կառավարման արդյունավետության ապահովման գործում առանցքային նշանակության վերլուծությանը:

Քաղաքական կայունության ուսումնասիրությունը հատկապես արդիական է անցումային հասարակությունների համատեքստում, քանի որ ժողովրդավարական ինստիտուտների կայացման և ամրապնդման գործընթացները ընթանում են քաղաքական ճգնաժամերի և ինստիտուցիոնալ անորոշության պայմաններում:

Արժեքավոր է նաև այն, որ քաղաքական կայունության գնահատման շրջանակում դիտարկվում է ոչ միայն քաղաքական և ինստիտուցիոնալ, այլև սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունը՝ արտացոլելով ժամանակակից քաղաքական մոտեցումները: Հետազոտության թեմայի արդիականությունը հիմնավորված է և բխում է ինչպես արդի քաղաքագիտական հետազոտությունների զարգացման տրամաբանությունից, այլև Հայաստանի առջև ծառացած քաղաքական և անվտանգային մարտահրավերներից:

Ատենախոսության առաջին՝ **«Քաղաքական կայունության տեսամեթոդական հիմքերը»** խորագրով գլուխը նվիրված է «քաղաքական կայունություն» հասկացության տեսական և մեթոդաբանական հիմքերի ուսումնասիրությանը: Առանձին ուշադրություն է դարձվում քաղաքական կայունության չափման ժամանակակից մոտեցումներին և միջազգային ինդեքսների կիրառելիությանը՝ ներկայացնելով դրանց մեթոդաբանությունը, սահմանափակումներն ու քաղաքական համակարգի կայունության գնահատման հնարավորությունները:

Երկրորդ՝ **«Քաղաքական համակարգի կայունության համեմատական վերլուծությունն ու Իսրայելի ինստիտուցիոնալ փորձի կիրառման հնարավորությունները Հայաստանում»** գլուխը նվիրված է Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի համեմատական վերլուծությանը: Միջազգային ինդեքսների և քանակական տվյալների հիման վրա հեղինակը գնահատում է երկու երկրների քաղաքական համակարգերի կայունության միտումները, բացահայտում դրանց վրա ազդող հիմնական արտաքին և արտաքին գործոնները: Միաժամանակ ուսումնասիրվում են Իսրայելի քաղաքական համակարգի կայունության ապահովման ինստիտուցիոնալ մեխանիզմները և գնահատվում դրանց կիրառելիության հնարավորությունները Հայաստանի պայմաններում՝ հաշվի առնելով քաղաքական, իրավական և սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները:

Աշխատանքն աչքի է ընկնում գիտական մշակվածությամբ. դիտարկվել են հիմնական հասկացությունների տեսական հիմքերը, տարբեր մոտեցումները:

Աշխատանքի շրջանակում իրականացվել է օգտագործված գրականության համափարպակ ուսումնասիրություն՝ ուշադրություն դարձնելով թեմային առնչվող հայեցակարգային ու ռազմավարական փաստաթղթերին, գիտական աշխատություններին, հայաստանյան և միջազգային պաշտոնական կայք-էջերում ներկայացված քանակական տվյալներին, որոնք հիմք են հանդիսացել կատարած եզրահանգումների համար:

Աշխատանքն առանձնանում է տրամաբանական կառուցվածքով, բովանդակային հաջորդականությամբ և մեթոդաբանական ամբողջականությամբ:

Այնուհանդերձ, հարկ ենք համարում առանձնացնել մի շարք դիտարկումներ, մասնավորապես՝

1. Հարկ է նշել, որ ատենախոսության թեմայի (*«Քաղաքական կայունության գործոնների համեմատական վերլուծությունը Հայաստանի Հանրապետության և Իսրայել պետության քաղաքական համակարգերի փոխակերպումներում»*) ձևակերպումը կարող էր առավել ամբողջական լինել, եթե ներառեր նաև հետազոտության ժամանակահատվածը, քանի որ դրա բացակայության պայմաններում հետազոտությունը ստանում է առավել լայն և ընդհանրական բնույթ: Միաժամանակ ատենախոսության ներածության, բովանդակության և եզրակացության մեջ (օրինակ, էջ 5,6,16,70,86,163 և այլն) հեղինակը որպես հետազոտության ժամանակահատված հստակ նշում է 2008-2023 թվականները: Հետևաբար, ժամանակագրական շրջանակների արտացոլումը նաև թեմայի ձևակերպման մեջ կնպաստեր հետազոտության առարկայի առավել հստակ սահմանմանը:
2. Աշխատության ներածության մեջ (էջ 13) նպատակահարմար կլիներ «Հետազոտության առարկան և օբյեկտը» ենթավերնագիրը ներկայացնել «Հետազոտության օբյեկտը և առարկան» տարբերակով, քանի որ գիտական աշխատանքներում ընդունված է նախ նշել հետազոտության օբյեկտը, այնուհետև՝ առարկան, քանզի առարկան է ընկած հետազոտության օբյեկտի սահմաններում: Հատկանշական է, որ բովանդակության մեջ հեղինակն արդեն հետևել է սույն տրամաբանությանը. հետազոտության օբյեկտն ու առարկան սահմանելիս նախ ներկայացնում է օբյեկտը, ապա՝ առարկան:
3. Աշխատության 1-ին գլխի՝ ***«Քաղաքական կայունության տեսամեթոդական հիմքերը»*** վերնագիրը կարող էր առավել լիարժեք արտացոլել դրա բովանդակությունը, եթե ներկայացվեր ***«Քաղաքական կայունության ուսումնասիրության տեսամեթոդաբանական հիմքերը»*** տարբերակով, քանի որ հիմնականում նվիրված է քաղաքական կայունության վերաբերյալ սահմանումների առանձնահատկությունների, դրանց տեսական և մեթոդաբանական տարբերությունների ուսումնասիրությանը, ինչպես նաև քաղաքական կայունության չափման ժամանակակից մոտեցումների վերլուծությանը:

տարբերությունների ուսումնասիրությանը, ինչպես նաև քաղաքական կայունության չափման ժամանակակից մոտեցումների վերլուծությանը:

4. Թեև Իսրայելը հանդիսանում է ատենախոսության առանցքային համեմատական օբյեկտներից մեկը, օգտագործված գրականության ցանկում Իսրայելի քաղաքական և կուսակցական համակարգերին, ինստիտուցիոնալ զարգացմանը նվիրված հիմնարար աշխատությունները ներկայացված չեն բավարար չափով: Տվյալ ոլորտի ճանաչված հեղինակների (օրինակ՝ Asher Arian, Sammy Smooha, Dan Horowitz, Baruch Kimmerling և այլոց) աշխատությունների ներառումը կհարստացներ հետազոտության տեսական հիմքը՝ հնարավորություն տալով ավելի լայն գիտական համատեքստում մեկնաբանել Իսրայելի քաղաքական համակարգի զարգացման առանձնահատկություններն ու փոխակերպումները:

5. Հեղինակի այն պնդումը, որ Հայաստանում գործող՝ համալսարանների ու մասնավոր հատվածի համագործակցությանը նպաստող գիտահետազոտական ծրագրերը սակավաթիվ են և թիրախային չեն (էջ 142), բավարար հիմնավորված չէ: Մասնավորապես, ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից իրականացվող ծրագրերի ու միջոցառումների գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային-ծրագրային, դրամաշնորհային ֆինանսավորումը իրականացվում է պետության կողմից սահմանված գերակա ուղղություններով, գիտական փորձաքննության, ընթացիկ և տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջներով, ինչը վկայում է ծրագրերի նպատակային բնույթի և վերահսկողության մեխանիզմների առկայության մասին: Հետևաբար, նման ընդհանրական գնահատականը պահանջում էր առավել հիմնավորված վերլուծություն և փաստական ապացույցներ՝ ծրագրերի արդյունավետության կամ թափանցիկության վերաբերյալ եզրահանգումներ կատարելու համար:

Այնուամենայնիվ, նշված դիտողությունները չեն նսեմացնում հեղինակի կատարված աշխատանքի գիտական և կիրառական արժեքը: Հեղինակին հաջողվել է արտացոլել ատենախոսության հիմնական դրույթները հրապարակած գիտական հոդվածներում:

Ընդհանուր առմամբ, սույն հետազոտությունը ինքնուրույն, ավարտված գիտական աշխատանք է, առանձնանում է գիտական նորույթով, գործնական նշանակությամբ:

Վերոնշյալից ելնելով՝ ինչպես նաև հաշվի առնելով թեմայի արդիականությունը, եզրահանգումների հիմնավորվածությունը կարելի է եզրակացնել, որ Արմեն Արարատի Միրզոյանի «Քաղաքական կայունության գործոնների համեմատական վերլուծությունը Հայաստանի Հանրապետության և Իսրայել պետության քաղաքական համակարգերի փոխակերպումներում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Ռուս-Հայկական համալսարանի
Միջազգային հարաբերությունների և
հասարակաքաղաքական գիտությունների
ինստիտուտի Քաղաքագիտության ամբիոնի
ավագ դասախոս, ք.գ.թ.՝ Ի.Ա. Քարամյան

Քաղաքական գիտությունների թեկնածու Ի.Ա. Քարամյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Ռուս-Հայկական համալսարանի
գիտական քարտուղար
բ.գ.թ., դոցենտ՝ Ռ.Ս. Կասաբաբովա

21.07.2026